ծովուն ալեացը վրայ, չեմ գիտեր թէ ով ոք երբէք կրցեր է Տ. Այվազովսքիին առնլի լաւ դուրս ցատքեցընել:

Փարիզու *Կայսերական Մեղու* օրագիրն այսպէս կը-յայտնէր իր դատաստանը օգոստոսի քուոյն մէջ:

Հանդիսարանին մէջ ամենէն մեծ անուն ստացողներուն մէկն է անտարակոյս Տ. Այվազովսքի, որ Խրիմու Թէոդոսիա (Քեֆէ) քաղաքը ծնած է եւ Փեթրսպուրկի ճեմարանին աշակերտ է: Այվազովսքի եօթը պատկեր ունի արուեստահանդիսին մէջ. մինչեւ հիմա ես երեքը միայն տեսայ, բայց այնչափն ալ բաւական է այն նկարչին եւ իր վրձինին ինչ ըլլալը իմանալու համար: *Արեւուն մեռնելու ժամանակ դաշտերէն տեսիլը* իրաւցնէ հրաշալիք մըն է ազդեցութեանն ուզոյնին կողմանէ: Մշուշի մէջ ասդիս անդին ցրուած հազարաւոր ոչխարներուն վրայ հազարաւոր սքանչելի վարդագոյն ցոլացմունքներ կան: Կզգաս թէ այն տեղուանքը նոյն միջոցին բնութեան շքեղաշուք ժամ մըն է, եւ ուս գեղացւոյն քերթողական վայրկեան մը: Անոր համար տեսնողին վրայ ալ սաստիկ տպաւորութիւն կընէ: Կարծես թէ իրաւցնէ այն անհուն բացատանեայց լռութիւնը զգացեր ես. այն պատկերին առջեւ աղօթք ընելու փափագ մը կուգայ վրադ ...: Իսկ *դաշտ ցորենոյ ի Փոքրն Ռուսիա, ի հասարակ աւուր*, այնպես սքանչելի է որ կէս օրը անկեց առնլի լաւ բացատրել անկարելի է: Կզգաս այն բիւրաւոր ցօղուններուն մէջէն ելած ջերմութիւնը. արեւուն ճառագայթները գրեթէ կզոնեցընեն: միտքդ կուգայ մանկութեանդ օրերը (եւ ով կայ որ այսպիսի յիշատակութիւններ չունենայ) երբոր եզիպտացորեններու կամ ցորեններու, կամ ձիթենիներու մէջէն քալելու առենդ ինչպես որ կըսէ Տանթ, *այն պզտիկ ճամբաներէն անցնիր որ փուշերու խուրձերով գոցուած են*:

Նկարչական Շտեմարան մակագրուած ամսաթերթը այս Տաճկի սքանչելի պատկերը հրատարակելով կխոստովանի թէ Տ. Այվազովսքեայ սքանչելի պատկերին հազիւ կարող է անկատար գաղափար մը տալ:

— et les rayons de la lune qui se prolonge en tremblan sur les flots.

L'Abeille impériale donnait son jugement au public dans son numéro d'août de la même année.

Un des plus grands succès du Salon est sans contredit celui de M. Aïvazovsky, né à Théodosie, en Crimée, et élève de l'Académie de Saint-Pétersbourg. C'est une revanche prise avec le pinceau contre la gloire de nos armes. M. Aïvazovsky a sept tableaux à l'Exposition : je n'en ai encore vu que trois, mais ils suffisent pour faire juger l'homme et sa palette. *Les Steppes au coucher du soleil* sont une véritable merveille d'effet et de couleur. Il y a sur ces myriades de moutons épandus çà et là dans la brume, des myriades de reflets d'un rose superbe. On sent que c'est là une heure solennelle pour la nature dans ces climats, — une minute poétique pour le paysan russe. Aussi le spectateur lui-même est-il vivement impressionné. Il lui semble avoir assisté réellement à ce grand silence des espaces sans bornes; vis-à-vis de cette toile, on a presque envie de prier... — Quant au *Champ de blé dans la Petite-Russie, au milieu du jour*, il est impossible de mieux rendre le midi; on sent en quelque sorte la chaleur qui s'échappe de ces milliers de tiges. On en voit les émanations; on est accablé sous le poids du soleil. On se rappelle malgré soi (qui n'a de ces souvenirs?) les jours de son enfance, où, à travers les maïs, les blés, les oliviers (cela dépend des latitudes), on parcourait, comme dit le Dante, « *ces petits sentiers qui bordent l'Arno, et que bouche un petit fagot d'épines.* »

La revue mensuelle, *le Magasin pittoresque*, en publiant la gravure du café turc, avoue qu'elle peut à peine donner une idée imparfaite de ce prodigieux tableau sorti des mains de M. Aïvazovsky.

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԲԱՆՔ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ

ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

Այս կարեւոր եւ իրագմաց հետեւ թախանձեալ գրքոյկը՝ քանի մը ամիսք իվեր տպագրուած ըլլալով, հոս հասարակութեան կաւետեմք զայն՝ հանդերձ իր համառօտ ճառաջաբանութեամբը. ծանուցանելով միանգամայն՝ որ թէ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆը եւ թէ Վերադարձին ՅԱՒԵԼՈՒԱԾը,—ինչպէս նաեւ մեր ուրիշ տպագրեալ գրքերը —, կրնան Ազգայինք առանալ Իզմիր եւ Իսմաիլատան Տ. Յարութիւն Մարգարեան, եւ Իտիխիա եւ Իվրաստան Տ. Աւետիք Էնֆիեձեանց պատուական գրավաճառներեն, կամ Ազդարարոյս մեծարգոյ գործակալացը գրելով, եւ կամառմեզիֆարիզ:

« *Հայկազեան Վարժարանիս աշակերտաց պիտոյիցն համար յօրինեցաւ էրայս ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆը, որ Թէ եւ համառօտ՝ բայց իւր մէջը կամփոփէ զամենայն որ ինչ Քրիստոնէի մը համար կարեւոր է ի գիտել: Սակայն բարեւսէր ազգայինք շատ անգամ փափագ յուցուցած ըլլալով արժանապատիւ Գաբրիէլ Աւագնորդ վարդապետին՝ որ շնորհէ զայս իմայելս բոլոր մանկանց ուխտի Հայաստանեայց Եկեղեցւոյ, արդ հաճեցաւ նա անոնց Թոխանձանացը զիջանիլ:*

« *Մեք ալ այս կարեւոր գրքոյկը տպագրելու եւ սիրելի Ազգերնուս նուիրելու ժամանակ՝ բոլոր բազձանքնիս այն է, որ մեր ուսումնասէր ազգայքը՝ կրթուին իրրանանգս հաւատոյ, բարեպաշտ ազգայինք՝ հաստատուին եւ հաստատեն զայս, եւ օտարք՝ հակառակորդքն կամ Ջնդամիք Սուրբ Եկեղեցւոյս Հայաստանեայց՝ համոզուին, իմանան Թէ ինչ ճշմարիտ հիման վրայ է հաստատեալ մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին, եւ սակրին այսուհետեւ իրենց ծուռ նախապաշարմունքներովը չդեմարանել Քրիստոսի անարատ Հարսը, որուն Էջք անապատելի սրբութեանը կուզեն*

ճշմարիտ զաւառաստան ընել՝ կամ խելամուտ լինել, Ծոզ այսպիսի Վարդապետաբարեհ մը ճանաչէն կամ ուսանին՝ զոր Ազգային Հոգեւոր ժողովը քններ է եւ ընդուներ, եւ զոր մեր Սուրբ Եկեղեցւոյ վեհագոյն Գլուխներէն մէկը հրամայեր է որ տպագրուի եւ բոլոր Ազգային վարժարանաց մէջ ընդունուի։ »

ՀԱՆԵԼՈՒԿ.

Ինձմէ անուշ ինչ բան կայ
Երբ ես պոչ ունիմ.
Ինձմէ չեղի ինչ բան կայ
Երբ ես պոչ չունիմ.
Ի՞նչ աւելի պարտուց կայ
Երբ պոչ գլուխ չունիմ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ լուծումը

Մեր արգոյ բաժանորդաց մէկը Տ. Ե. Ց. Հաճեան, անցեալ ամսուան Հանելուկին լուծումը նրբամիտ ճարտարութեամբ գտեր է ու առ մեզ յուղարկեր:

Կոստանդնուպոլիս, 29 հոկտեմբեր 1858.

Գերապատիւ Տեարք,

Մինչեւ ցայսօր ձեր պատուական ամսագիր Մասեաց Աղաւնոյն մէջ առաջարկուած Հանելուկները բէ եւ մասնաւորաց կողմանէ լուծուած ըլլալը տեսնուած չէ, բայց եւ այնպէս հրատարակելու յօժարելնուդ անտարակոյս ըլլալով, կ'համարձակիմ այս անգամ վերջին հոկտեմբերի թերթին մէջ եղած Հանելուկը լուծելով ներկայ գրութեամբս ձեր Գերապատուութեանցը իմացունել, խնդրելով, որ եթէ արժան դատիք, հրատարակելու բարեհաճութիւնը ընէք:

Հանելուկին լուծմունքն է, ԴԱՆԱԿ բառը, որուն եթէ գլուխն ու վիզը այսինքն Դ եւ Ա գրերը մէկտեղ առնումք (ԴԱ) այրուբենի չորրորդ տառը կգտնեմք: Երրոր գլուխը (այսինքն առաջին գիրը) վերցընեմք՝ մեր սուրբ Լուսաւորչի հայր Անակը կ'իշնեմք: Եւ երբ (առաջին գիրը) այսինքն գլուխը չվերցունեմք այն ժամանակը պէտք է որ վախնամք իրմէն այսինքն *Դանակին*:

Մնամ Գերապատիւ Տեարցդ
Խոնարհ ծառայ.
ԵՂԻԱԶԱՐ Ց. ՀԱՃԵԱՆ.

ԱԶԳԱՑՑԱՑՔ

առ որդիս Մհերուժանայ

Ո՛չ, ձեզ ոչ, չիք, չիք յաջողուած
Ո՛վ ժանաք, առ ձեզ գոչէ Աստուած.
Որ զՀայրենեացդ ուրանայք սէր,
Եւ բզնորուն խրնդրէք աւեր.
Երկինք բզձեզ զատապարտեն
Եւ Հայրենիք խոտեն մերժեն:
Ելէք իմենջ իրաց զրնայք,
Անէծք ոյց չեն ձրշմարիտ Հայք.
Զի կայք իմենջ իրաց իրաց զրնայք
Անէծք ոյց չեն ձրշմարիտ Հայք: (*Երկնեան*)

Ի ձեր ճակատ նրսեմասուեր
Ըզդատակնիք տանիք դուք ձեր.
Ի ձենջ՝ ով դուք որդիք Քամայ,
Ամենայն ազգ զարշի սոսկայ.
Ասեն. Դա զծնող իւր անարգուս,
Վ,այ, Հայրենեացն է մատրնուս:
Ելէք իմենջ... եւ այլն.

Օ՜ն անդր..... ընդ մեզ չիք ձեր բաժին,
Խաւար ձեզ ակն ունի չտին.
Մեր Հայկն է նայր (1), Գրիգոր՝ Վ,ասան,
Ձեր հեղինակ՝ Սիւնեացն իշխան (2).
Ձմեօք աստղ Հայկին յերկնուստ ցոլայ,
Ձեզ՝ շանք սլրսակ Մհերուժանայ (3):
Ելէք իմենջ... եւ այլն.

(1) Հայկ նախահայր ազգիս, յորոյ անուն պատուեմք զտողդուն գայն համաստեղութիւն՝ զոր օտարք յազգաց Օրիոն կոչեն:

(2) Սիւնեաց իշխան, Վ,ասակ սիւնի մարզպան, որ ուրացաւ զհաւատս որ Ի՞բիսատոս, եւ մատնեաց զՀայաստան յուսով առնոյ գնորա բազաւորութիւն:

(3) Մհերուժան մատնիչ հայբենեաց եւ հաւատոյ, որ ընդդէմ Հայրենեացն զեն առեալ՝ իմմբատայ բագրատիոն արքեպիս պասկեցաւ հրացեալ շամփուրիւ ընդ հենգս, եւ զարժանի մատնութեանն կրեաց պատուհաս:

LES ENNEMIS DE LA PATRIE

Aux fils de Méroujan le traître.

Non : pour vous point de succès,
O perfides! c'est Dieu qui vous l'annonce.
Vous qui reniez l'amour de la Patrie,
Qui demandez sa ruine;
Les cieux vous condamnent,
La Patrie vous méprise et vous rejette.
Arrière! loin de nous;
Malédiction sur ceux qui ne sont pas de vrais Arméniens.
Que tardez-vous! éloignez-vous, éloignez-vous de nous;
Malédiction sur ceux qui ne sont pas de vrais Arméniens. (*Bis.*)

Sur votre front couvert d'opprobre
Vous portez le cachet de votre condamnation,
O fils de Cham! Vous n'inspirez que dégoût à toutes les nations;
A votre vue elles frissonnent,
Elles disent : Le voilà, celui qui méprise la source de ses jours,
Le voilà, le lâche, le traître à sa patrie.
Arrière! etc.

Allez! vous n'avez rien de commun avec nous;
Ce sont les ténèbres dernières qui vous attendent.
Notre père, à nous, c'est Haïg (1); Grégoire est notre égide;
Votre guide, à vous, c'est le prince de Sunik (2);
Sur nous resplendit du ciel l'étoile de Haïg,
Sur vous la broche enflammée qui servit de couronne à Méroujan (3),
Arrière! etc.

(1) *Haïg*, père de la nation arménienne, a donné son nom à la brillante constellation d'Orion.

(2) *Prince de Sunik*, (Vassag le traître.) Chef des princes arméniens après la chute des Arsacides, au v^e^ siècle, il trahit sa religion et sa patrie dans le but de devenir roi d'Arménie, grâce au secours des Perses.

(3) *Méroujan*, prince arménein qui, dans l'espoir d'obtenir le trône, vendit sa patrie aux Perses. Mais Sempat, général arménien de la famille Pakradouni à laquelle appartenait le droit de couronner les rois, le vainquit et le fit prisonnier. L'entraînant ensuite dans une chaumière près du champ de bataille, il s'empara d'une broche enflammée, l'arrondit en forme de couronne et la lui mit sur la tête.